թղ. Մակարեանց 3 ր., Մար. Ազամեանց 40 կ. կէկ. Բայնդուրեանց 1 ր., Լիզ. Պետրոսեանց 2 ր.՝ Սօփ. Պետրոսեանց 1 ր., Մել. Ուշվերիձէ 40 կ.՝ Ան. Ալխազեանց 1 ր.՝ Ան. Պետրոսեանց 1 ր., Նատ. Ղազարեանց 3 ր., Բէթ. Սիմէօնեանց 1 ր., թալալ Փարեմուզեանց 1 ր., Դարո Սափարեանց 1 ր., կատ. Յարութիւնեանց 1 ր., Սօփ. Ռոստոմեանց 20 կ., Ան. Յարութիւնեանց 1 ր., Նինօ Ստեփանեանց 1 ր., Գայ. Սախեանց 1 ր., Բէկ. Սախեանց 1 ր., կատ. Մատիկեանց 1 ր., Բագ. Գէորգեանց 2 ր., Ստ. Ստեփանեանց 1 ր., Կէկ. Թաթուսեանց 3 ր., խան. Խիթարեանց 60 կ., Բար. Ազամեանց 20 կ., Տատ. Մկրտումեանց 40 կ.: Ընդամենը 304 ր.:

Տէր-Աբէլ Սուքիասեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 29 փետրվարի

Կարդալով լրագիրներ տեղեկացայ, որ սովը տիրում է Հայաստանում, ես աշակերտ պ. պ. Կ. Բեկլարեանցի և Օ. Օրբելեանցի ուսումնարանի պարտք համարեցի հաւաքել իմ դասընկերներից նուէրներ յօգուտ Հայաստանի սովատանջների, եւ ահա առաջարկում եմ ձեզ 15 ր. 32 կ.: Բարեհաճէք հասցնել ուր հարկն է, եւ խնդրեմ տպագրէք ձեր «Մշակ» լրագրում նուիրատուների անունները:

Ահա նուիրատուների անունները. Ծովեանեան Մ. 1 ր., Բաժբէուքեան Պ. 20 կ., Շարիմանեան Բ. 10 կ., Տէր-Ջանեան Գ. 20 կ., Պէրոսեան Մ. 40 կ., Մանուկեան Ն. 22 կ., Շերմազանեան Բ. 1 ր., Թաթէոսեան Ս. 1 ր., Զօրեան Ս. 40 կ., Ջառափեան Ա. 10 կ., Ջառափեան Հ. 10 կ., Սարաջեան Տ. 20 կ., Մամիկոնեան Ա. 40 կ., Մարտիրոսեան Գ. 20 կ., Վարդանեան Ի. 15 կ., Սկանդարեան Գ. 10 կ., Սարգիսեան Մ. 10 կ., Թաթէոսեան Պ. 20 կ., Աբրահամեան Պ. 20 կ., Ղալամքարեան Տ. 10 կ., Սայիփեան Ս. 10 կ., Մազարեան Կ. 10 կ., Մազարեան Գ. 10 կ., Ջարոխչեան Գ. 1 ր., Ամբարդանով Ս. 40 կ., Թաթէոսեան Ա. 20 կ., Վահանեան Վ. 1 ր., Օհանեան Պ. 20 կ., Նիկօլասիձէ Գ. 40 կ., Սափարեան Ա. 1 ր., Եարալեան Պ. 20 կ., Կիրկիտեան Գ. 10 կ., Ղալամքարեան Ս. 20 կ., Աւալեան Ա. 10 կ., Խիզանեան Ս. 20 կ., Շալամեան Ս. 10 կ., Մազաքելեան Գ. 10 կ., Ծովեանեան Ա. 20 կ., Ծովեանեան Կ. 20 կ., Ղարագեօզեան Ս. 50 կ., Տէր-Աբրահամեան Ս. 20 կ., Փիրհազով Մ. 10 կ., Տէրտէրեան Ա. 40 կ., Մազաթեան Պ. 20 կ., Մազարեան Յ. 35 կ., Մետաքսայեան Գ. 10 կ., Եարամիշեան Տ. 10 կ., Մերվիլեան Բ. 20 կ., Այվազեան Ա. 20 կ., Սուսանեան Պ. 20 կ., Սուսանեան Մ. 20 կ., Հերհարեան Լ. 10 կ., Էլարեան Գ. 10 կ., Փարսադանեան Ա. 10 կ.— Ընդամենը 15 ր. 32 կ.:

Ս. Զօրեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 1 մարտի

Սոյն ցուցակաւս ուղարկելով 83 րուբլ 30 կ., յօգուտ Տաճկաստանի հայ սովատանջների, որ ժողովեցի տեղւոյս օրիորդական գիմնազիում և մասամբ ծանօթներիցս, ուստի խնդրեմ բարեհաճէք տպագրել ձեր պատուական «Մշակ» լրագրում յիշեալ նուիրատուաց ազգանունները:

Օր. Ծովեանեանց 3 ր., օր Արղութեանց 1 ր., օր. Բէհբութեանց 1 ր., օր. Տէր-Ստեփանեանց 1 ր., օր. Մարկոսեանց 2 ր., օր. Մելիք-Բէգլարեանց 2 ր., օր. Յուրինեանց երկու քոյր 1 ր., օր. Թամամշեանց 1 ր., օր. Կատարինէ Խօսրովեանց 1 ր., д-ца Бѣликъ Евгенія 50 к., д-ца Елизавета Яновская 1 р., օր. Եւգենիա Նահապետեանց 1 ր., օր. Վարվարէ Մելիք-Նուբարեանց 1 ր., օր. Նատալիա Յուրինեանց 1 ր., օր. Բուդաղեանց Սոֆիա 1 ր., д-ца Куницкая Королина 30 к., д-ца Пригоре Александра 30 к., д-ца Карамоска Евгенія 20 к., օր. Ղազարեանց Կլաւդիա 2 ր., д-ца Абхази Дарья 50 к., օր. Մանուչարեանց Եղիսաբէթ 50 կ., օր. Եւգենիա Շանշեանց 45 կ., д-ца Лазарева Анна 1 р., д-ца Вундеръ Леокадія 20 к., օր. Զուբարեանց Սոֆիա 1 ր., օր. Բատխանեանց Տատիանա 1 ր., д-ца Варвара Жукъ 1 р., օր. Օլգայ Շախնազարեան 2 ր., д-ца Бусаева Вѣра 1 р., д-ца Брандъ Августа 1 р., օր. Եւգենիա Շաղինեանց 1 ր., օր. Նունէ Փրիդոնեանց 1 ր., օր. Եփէմիա Մեղվինեանց 1 ր., օր. Նունէ Այվազեանց 1 ր., д-ца Горбунова 1 р., д-ца Сулханова 50 к., д-ца Бординосъ 20 к., д-ца Никалаева 20 к., օր. Եղիսաբէթ Ամիրեանց 1 ր., օր. Մարիամ Վարդանեանց 1 ր., օր. Վարվարէ Զուբարեանց 1 ր., օր. Թամարա Փիթոյեանց 1 ր., օր. Ալէքսանդրա Թարխանեանց 1 ր., օր. Եւգենիա Բարեանց 30 կ., օր. Աննա Բաբանեանց 2 ր., օր. Վարվարէ Մարկոզեանց 2 ր., օր. Փարեշեանց 1 ր., д-ца Анжелина Шадинова 50 к., օր. Եղիսաբէթ Ջավրեանց 1 ր., օր. Կատարինէ Միրվելեանց 1 ր., д-ца Казловская Наталія 1 р., օր. Աշխէն Գուլուլեանց 1 ր., օր. Մատինեանց Սաթենիկ 1 ր., օր. Մարիամ Ռոստովեանց 1 ր., օր. Եւգենիա Աբրամեանց 20 կ., օր. Կատարինէ Սունդուկեանց 50 կ., օր. Տէր-Յովսէփեանց 50 կ., օր Տէր-Աստուածատուրեանց 1 ր., օր. Այվազեանց 1 ր., օր. երկու քոյր Բուդաղեանց 1 ր., օր. Բուտուլեանց 20 կ., օր. Աստուածատուրեանց 40 կ., օր. Սունդուկեանց 50 կ., օր. Մարիամ Ջանշեանց 1 ր., օր. Մելիք Նուբարեանց Սոֆիա 1 ր., օր. Նունէ Սարուխանեանց 1 ր., օր. Սոֆիա Գուլուլեանց 1 ր., օր. Ալէքսանդրա Ներսէսեանց 40 կ., օր. Կուզանեանց 20 կ., д-ца Анна Семенова 10 к., д-ца Екатерина Санджанова 40 к., օր. Եղիսաբէթ Կուզանեանց 40 կ., д-ца Александра Шкорбанова 15 к., д-ца Вѣра Ламанова 20 к., д-ца Анна Штейнъ 50 к., տիկին Նունէ Նուրեանց 2 ր., տիկին Սոֆիա Կիրակեան 3 ր., տիկին Թալալա Էրեանցեանց 3 ր., Ալէքսանդր Մադաթեանց 1 ր., Նիկողայոս Դաւիթեանց 1 ր., Արշակ Տուլայեանց 3 ր., Տարկուլօվ 1 ր., Արտեմ Լիսինով 1 ր., տիկին Աննա Եազուփեանց 3 ր.: Գումարն է 83 ր. 30 կ.:

Օրիորդ Վարդանոյշ Օրբէլի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«С.-Петербургскія Вѣдомости» լրագիրը յայտնում է որ Վէրա Զասուլիչի Ս. Պետերբուրգի մէջ կալանաւորվելու լուրը ստոյգ չէ:

—

Ստացանք պ. բժիշկ Բ. Նաւասարդեանից 500 րուբլ հետևեալ նամակով. «Ուրախութեամբ հոգւով և սրտիւ պատիւ ունեմ յանձնել «Մշակի» ուսումնածաւալ «Արարատեան» ընկերութեանը հասցնելու 500 րուբլ, որ նուիրում է հայրս, վաղարշապատցի Աբրահամ Նաւասարդեանը»: Չենք կարող մեծ համակրութեամբ չը վերաբերվել այդ առատաձեռն նուէրին, մանաւանդ որ լսում ենք թէ պ. Աբրահամ Նաւասարդեան, բացի այդ 500 րուբլուց, դարձեալ այս օրերս նուիրեց 500 ր. յօգուտ Վանի սովեալների և այդ գումարը հասցրել է «Փորձ» ամսագրին: Թող Թիֆլիսի հարուստները օրինակ առնեն մի գիւղացուց որ ազգասիրական զգացմունքից դրդված նուիրում է մի անգամից 1000 րուբլ ազգօգուտ գործերի համար:

—

Պ. Մնացական Սարգսեան, որ տարաւ 500 րուբլ «Մշակի» պրեմիան, փողը ստանալուց յետոյ նուիրեց այդ գումարից 50 րուբլ յօգուտ Վանի սովատանջների:

—

Լսում ենք որ կովկասեան ցենզուրական կոմիտէտի դատի քննութիւնը «Մշակի» խմբագրութեան դէմ նշանակված է ԹԻՖԼԻՍԻ նահանգական դատարանում մայիսի 22-ին:

—

Մարտի 3-ին կրկին բաւական շատ ձիւն եկաւ ԹԻՖԼԻՍՈՒՄ: Բայց մի օրից յետոյ ձիւնը կրկին հալվեց և սաստիկ ցեխ գոյացաւ փողոցներում:

—

Մարտի 2-ին Արծրունու թատրոնում վրաց դերասանական խումբը մի ներկայացումն տուեց: Ներկայացումն շատ աջող անցաւ:

—

Երէկ, մարտի 5-ին կրկին փոխադրեցինք հեռագրով Կ. Պոլիս 1000 րուբլ յօգուտ Վանի սովատանջների: Այդ նուիրատուների ցուցակներից շատերը դեռ ևս տպված չեն: Հետզհետէ կը տպենք այդ ցուցակները: Ուրեմն մինչև այժմ, երեք շաբաթվայ ընթացքում ուղարկեցինք յօգուտ Վանի սովեալների 6000 րուբլ: Դարձեալ մնում է խմբագրութեան մէջ 442 րուբլ, 12 կոպէկ:

—

Ստացանք ԶԻԳԻՇԼԱՐԻՑ անյայտ անձինքներից 26 ր. յօգուտ «Արարատեան» ընկերութեան:

—

Մի շուշեցի Մ. Կ. գտաւ ԹԻՖԼԻՍԻ ժողովարանի դռների առջև մի ոսկեայ ժամացոյց, որ յայտնվեցաւ թէ պատկանում է տ. Աննա Բուդաղեանին: Տիկնօջը ժամացոյց վերադարձնելով, պ. Մ. Կ. ստացաւ նրանից 10 ր. վարձատրութիւն: Այդ 10 ր. նա այժմ ուղարկել է մեզ խնդրելով հասցնել յօգուտ Վանի սովեալների:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

Աւստրօ-Ունգարիայի զինուորական պատրաստութիւնների մասին լրագիրները հետևեալ տեղեկութիւններ են հաղորդում:

Մօտենում է այն ժամը, երբ Աւստրօ-Ունգարիան ստիպված կը լինի կռուել Ալբանեան միութեան հետ:

Նօվօ-Բազարի սանջակում զինուորական նշանաւոր պատրաստութիւններ են տեսնվում: Վիեննայից փետրվարի 15-ից հեռագրում են, որ հաստատվում է վաղուց տարածված այն լուրը, թէ Ալբանեան միութիւնը կենտրոնացրել է 12000 զօրք, որի թւում գըտնվում են 1,500 մարդիկ Մուխտար-փաշայի կանոնաւոր զօրքերից, որոնք ալբանցիներին սովորեցնում են պատերազմական գործողութիւններ: Այդ տեղեկութիւնները ստացվում են ամենահակառակ աղբիւրներից և հաստատում են, որ Աւստրօ-Ունգարիայի դրութեանը Բօսնիայում և Հերցեգովինայում և առհասարակ Թիւրքաց պետութեան սահմաններում վտանգ է սպառնում:

Գուսինիէն և Պլավան Չերնոգորիային յանձնելու առիթով այդ իշխանութեան և Ալբանեան միութեան մէջ պատահած անհամաձայնութիւնները վատթարացնում են Աւստրօ-Ունգարիայի դրութիւնը: Բացի այդ, եթէ կռիւ պատահի ալբանցիների և աւստրիացիների մէջ, Հերցեգովինայի և Բօսնիայի բնակիչները, որոնք նուաճված են աւստրիացիների զէնքի ուժով, անկասկած կը միանան ալբանցիների զօրքի հետ: Պէտք է խոստովանել, որ Թիւրքաց պետութեան գործերը չափազանց խըճճված են և թէպէտ Չերնոգորիայի, Բօսնիայի, Հերցեգովինայի և Ալբանեան միութեան հողերի մէջ պատրաստվող անցքերը հարուած կը տան այդ պետութեանը, բայց մի և նոյն ժամանակ նոքա կը վնասեն և Աւստրօ-Ունգարիային, թուլացնելով նրա քաղաքական և ֆինանսական դրութիւնը: Դեռ նորերում աւստրիական պետական մարդիկ հանգստացնող ձայներ էին կարդում, հաւատացնելով որ խաղաղութիւնը անպատճառ կը պահպանվի և դատապարտում էին Աւստրօ-Ունգարական զօրքերի շատացնելու միտքը, որ համակրութեամբ ընդունվել էր թէ պալատում և թէ զինուորական շրջաններում: Դեռ նորերում աւստրօ-ունգարական ազատ մամուլը վրդովված էր այդ պետութեան զինուորական ուժերի մեծացնելու վայրենի մըտքից, մանաւանդ լինելով հարկերից ծանրաբեռնված և երկրի անպտղաբերութենից աղքատացած ազգաբնակութեան թշուառ դըրութեան վրա, գործարանական և արդիւնաբերական գործունէութեան կանգնելու վրա: Իւրաքանչիւր բարեմիտ և խոհեմ մարդ անհրաժեշտ էր համարում խաղաղութիւնը և պետական ծախսերի քչացնելը:

Այժմ այդ խաղաղութեանը դարձեալ վըտանգ է սպառնում: Դարձեալ պատերազմ է սպասվում ալբանցիների և գուցէ Բօսնիայի և Հերցեգովինայի ապստամբված ազգաբնակութեան դէմ, այն երկրների ապստամբների դէմ, որոնց նուաճելու համար 100,000,000 գուլդէն փող ծախսվեցաւ և բազմաթիւ աւստրիացիների արիւն թափվեցաւ:

Եթէ Աւստրօ-Ունգարիան իր արտաքին քաղաքականութեան մէջ աւելի ինքնուրոյն լինէր, երկու կամ երեք ամիս առաջ կարող էր ազատվել այն ծանր դրութենից, որից նա ոչինչ օգուտ չէ կարող քաղել և որի պատճառով կարող է շատ բանից զրկվել: Նրան սպառնում է Բօսնիայի և Հերցեգովինայի կորուստը և պետական սնանկութիւնը: Դեռ այն ժամանակ երբ սկսվեցան անհաւականութիւններ Չերնոգորիայի և Թիւրքիայի մէջ ալբանցիների շնորհիւ, Աւստրօ-Ունգարիան պէտք է նախատեսէր, որ պետութեան ուղղակի շահերը պահանջում են ամենաեռանդոտ և գործնական կերպով պաշտպանել Թիւրքիայի առաջ Չերնոգորիայի իրաւացի և օրինաւոր պահանջները, որոնք ներկայացրած էին թէ Դիվանին և թէ Ալբանեան միութեան նշանաւոր առաջնորդներին և որոնք հիմնված էին 1878 թուականի դաշնագրի ճիշդ և անվիճելի որոշումների վրա: Այն ժամանակ ոչ Թիւրքիան և ոչ Ալբանեան միութիւնը չէին կարողացել կենտրոնացնել Չերնոգորիայի սահմանների մօտ զինուորական նշանաւոր ուժեր, այժմեան պէս չէին հաւատացած, որ կռիւը իրանց համար բարեյաջող հետևանքներ կունենայ, չէին համոզված, որ կարող են խլել Չերնոգորիայից այն, ինչ որ նրա օրինաւոր սեփականութիւն է, ինչ որ նա ստացել է 1876, 1877 և 1879 թուականների պատերազմներին իր հերոսական մասնակցութեան համար: Դեռ այն ժամանակ կարելի էր նախատեսել, որ ալբանցիների մօտենալը աւստրիական զօրքերով գրաւած երկիրներին կարող է ապստամբեցնել Բօսնիայի և Հերցեգովինայի նորերում նուաճված բնակիչներին, որոնք չափազանց ատում են աւստրիական լուծը, որ դրանք կարող էին նորից յուսադրվել ազատութիւնը ձեռք բերելու համար և որ դրա հետևանքը կը լինէր ապստամբութիւն, արիւնհեղութիւն, մահուան պատիժներ և այլն: Երկու կամ երեք ամիս սրանից առաջ կարելի էր բոլոր այս դժբաղդութիւնների առաջն առնել, եթէ աւստրօ-ունգարական կառավարութիւնը համարձակ պաշտպանէր Չերնոգորիայի պահանջները, եթէ ճնշումն գործէր Բ. Դրան վրա, եթէ Իտալիայի և Ռուսաստանի հետ ձեռք ձեռքի տուած գնար: Բայց աւստրօ-ունգարական առաջին մինիստրը աւելի լաւ համարեց Բերլինից եկած ցուցմունքներին և ներշնչումներին հետևել, իսկ Գերմանիայի շահերը պահանջում են Աւստրօ-Ունգարիային քշել դէպի Արևելք և որքան հեռու նա գնա, Գերմանիայի համար այնքան լաւ է:

Այսպիսի դժուար դրութենից Աւստրօ-Ունգարիան դեռ ևս կարող է դուրս գալ, եթէ նա կը պաշտպանէ Նիկոլայ իշխանի պահանջները և իր զօրքերը կը կենտրոնացնէ Ալբանիայի սահմանների մօտ Չերնոգորիային զինուորական օգնութիւն հասցնելու նպատակով:

‹ՄՇԱԿԻ› ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿՑԻՑ

ԲԱԳՈՒ, 6 մարտի: Այսօր փոխադրեցինք ձեր անունով 6000 րուբլ, որ ստորագրութեամբ հաւաքվեցաւ յօգուտ Վանի սովեալների: Խնդրում ենք ամենակարճ ժամանակում և ամենաստոյգ ճանապարհով հասցնել այդ գումարը ուր հարկն է: Ստորագրութիւնը շարունակվում է:

Խմբագիր—Հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ